ԾՐԱԳԻՐ

«ՏԵՐՆՈՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԿՐԹԱ-ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 5-ԱՄՅԱ

ԵՐԵՎԱՆ 2021

1. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի Երևանի կրթա-գիտական ինստիտուտը /հետագայում Ինստիտուտը/ գործում է Հայաստանի Հանրապետությունում 2001թվականից՝ համաձայն 1992 թվականի մայիսի 15-ին Տաշքենդ քաղաքում ԱՊՀ մասնակից պետությունների միջև կրթության ոլորտում համագործակցության մասին Համաձայնագրի, Ուկրաինայի Նախարարների Կաբինետի և ՀՀ Կառավարության միջև «Կրթության բնագավառում համագործակցության մասին» Համաձայնագրի՝ ըստ Ուկրաինայի և Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունների, ինչպես նաև ԱՊՀ մասնակից-պետությունների կրթության ոլորտում համագործակցության մասին Համաձայնագրի դրույթների, Ուկրաինայի և ՀՀ ԿԳ նախարարությունների փոխադարձ համաձայնությամբ, Տերնոպոլի ժողովրդական տնտեսության ակադեմիայի գիտական խորհրդի №7 առ 03.04.2001թ որոշման հիման վրա և Տերնոպոլի ժողովրդական տնտեսության ակադեմիայի ռեկտոր՝ Ալեքսանդր Ուստենկոյի № 191 առ 18 ապրիլի 2001թ. հրամանով:

Ինստիտուտի պետական գրանցման վկայականի համարն է՝ N 01Բ001579

Հայաստանի Հանրապետության Կրթության և Գիտության նախարարության կողմից 21.01.2013թ. տրված լիցենզիաներ.

Մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման (բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի) Սերիա Ա № 0044

Բակալավրի կրթական ծրագրի իրականացման (բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի) Սերիա Ա № 0049

1.1. Ինստիտուտի նպատակները և խնդիրները

Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի Երևանի կրթա-գիտական ինստիտուտի նպատակներն ու խնդիրներն են (ըստ կանոնադրության).

1.Բարձրագույն կրթության ոլորտում կրթական գործունեության իրականացումն ապահովելն է՝ բարձրագույն կրթության աստիճաններով.

- կրտսեր մասնագետի,
- բակալավրի,
- մագիստրոս:

2. Կարող է գործունեություն ծավալել գիտական հետազոտությունների և գիտական զարգացումների ոլորտում:

3. Ուկրաինայի և Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ոլորտում երկարաժամկետ համագործակցության և ինտեգրման կրթական գործընթացների խորացում՝ համաձայն երկու երկրների միջկառավարական և միջպետական պայմանագրերի:

4. Ուկրաինայի ԿԳ նախարարության կողմից արտոնագրված մասնագիտություններով և ՀՀ բարձրագույն կրթության չափանիշներին համապատասխան կրթության ծրագրերի իրականացում:

5. Ուկրաինայի և Հայաստանի Հանրապետության կրթական համակարգերի զարգացում, որոնք ուղղված են քաղաքացիների պահանջները ապահովելուն՝ ժամանակակից որակյալ կրթություն ստանալուն և դրա անընդհատության ապահովմանը:

6. Ուկրաինայի և Հայաստանի Հանրապետության կրթական տարածքի ձևավորման նպատակով ուսանողների, դասախոսների համարժեք փոխանակման հիման վրա բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստում:

7. Կրթական գործունեության կազմակերպում, համակարգում և վերահսկում, որն ապահովում է անձանց կողմից բարձրագույն կրթության ձեռքբերում առկա և հեռակա ուսուցման ձևերով իրենց կողմից ընտրված մասնագիտություններով և կրթական աստիճաններով:

8. Ինստիտուտի ամբիոններում գիտական հետազոտությունների կազմակերպում, ուսումնական գործընթացի մասնակիցների ստեղծագործական գործունեության ապահովում, կրթական և գիտական գործունեության հետևանքով ստացված արդյունքների կիրառում:

9. Ինստիտուտի գիտական և ինովացիոն գործունեության օրգանական համադրության ապահովում, համատեղ գիտական հետազոտությունների անցկացում, համագործակցության ընդլայնում:

10. Դիմորդների կողմից իրենց կարողությունների և տաղանդների իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

11. Մասնագիտական ուղղորդման աշխատանքների իրականացում, շրջանավարտների աշխատանքի տեղավորման հարցում օժանդակություն:

1.2. Ինստիտուտի գործունեության իրավական հիմքերը

Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի Երևանի կրթա-գիտական ինստիտուտն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, «Կրթության մասին», «Բարձրագույն կրթության մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Ուկրաինայի օրենքներով, Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի Երևանի կրթա-գիտական ինստիտուտի կանոնադրությամբ, Մայր ԲՈՒՀԻ՝ Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի կանոնադրությամբ, ռեկտորի հրամաններով, կարգադրություններով, որոշումներով և այլ իրավական ակտերով:

Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի Երևանի կրթա-գիտական ինստիտուտի աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3. Ինստիտուտում առկա մարդկային ռեսուրսներն են.

1. Սահակ Ղուդրատյան - ՏԱՏՀ Երևանի կրթա-գիտական ինստիտուտի տնօրեն

Հասմիկ Սիմոնյան - ՏԱՏՀ Երևանի կրթա-գիտական ինստիտուտի փոխտնօրեն

Ազատուհի Բարսեղյան - ՏԱՏՀ Երևանի կրթա-գիտական ինստիտուտի ուսումնական մասի վարիչ

(ղեկավար կազմի անուն, ազգանուն, պաշտոն)

2. Ընդհանուր թվով 41 մշտական աշխատող

(մշտական աշխատողների անուն, ազգանուն, պաշտոն)

3. Նարինե Մուրադյան - ՏԱՏՀ Երևանի կրթա-գիտական ինստիտուտի գլխավոր հաշվապահ

Լիանա Սևումյան - ՏԱՏՀ Երևանի կրթա-գիտական ինստիտուտի կրտսեր մասնագետի պատրաստման բաժնի վարիչ

Դիանա Բաբայան - ՏԱՏՀ Երևանի կրթա-գիտական ինստիտուտի կադրերի բաժնի վարիչ

Սոֆյա Մաթոսյան- ՏԱՏՀ Երևանի կրթա-գիտական ինստիտուտի գրասենյակի վարիչ

(ծրագրի իրականացման համար ներգրավված անձանց կազմի անուն, ազգանուն, պաշտոն)

1.4. Ինստիտուտի գործունեության ոլորտը

Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի Երևանի կրթա-գիտական ինստիտուտի գործունեության ոլորտներն են՝

1.Բարձրագույն կրթության ոլորտում կրթական գործունեության իրականացում կրթության աստիճաններով՝

- կրտսեր մասնագետ
- բակալավր
- մագիստրոս

II. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2.1. Ծրագրի նպատակը

Սույն ծրագրի համար հիմք է հանդիսացել՝

1. Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի Երևանի կրթա-գիտական ինստիտուտի կանոնադրությունը՝ ընդունված Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի ռեկտորի № 38 հրամանի առ 01.10. 2020թ. :

2.2. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում մինչև 2024/2025 ուսումնական տարվա ավարտը ինստիտուտի գործունեության ֆինանսական աղբյուր են հանդիսանում.

1. Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանը

2. ՏԱՏՀ Երևանի կրթա-գիտական ինստիտուտի ուսանողների ուսման վարձավճարները:

Սույն ծրագրի ընդհանուր արժեքը մինչև 2024/2025 ուսումնական տարվա ավարտը կազմում է 3.600.000 ՀՀ դրամ:

2.3. Ծրագրի իրականացման ժամկետները

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել մինչև 2024/2025 ուսումնական տարվա ավարտը:

2.4. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում մինչև 2024/2025 ուսումնական տարվա ավարտը Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի Երևանի կրթա-գիտական ինստիտուտը նախատեսում է հետևյալ միջոցառումները՝

Ծրագրի իրականացման 1-ին և 2-րդ տարիների ընթացքում կատարվելու են շենքի պահպանման աշխատաքներ, այդ թվում.

- տանիքների վերանորոգում, քանի որ ունենք 5 հարթ տանիք՝ պատված իզոգամով, որոնք բնության ազդեցության ներքո շարքից դուրս են գալիս,
- տարածքի ընթացիկ վերանորոգում,
- նյութատեխնիկական բազայի թարմացում,
- տարածքի բարեկարգում:

Ծրագի ծախսերի բաշխումը՝

2021 թվականին - 900.000 ՀՀ դրամ,

2022 թվականն - 900.000 ՀՀ դրամ,

2023 թվականին - 900.000 ՀՀ դրամ,

2024/2025 ուսումնական տարի - 900.000 ՀՀ դրամ:

2.5. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքները

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի Երևանի կրթա-գիտական ինստիտուտը կապահովի.

- ՀՀ բարձրագույն կրթության և միջազգային չափանիշներին համապատասխան կրթության ծրագրերի իրականացում:

Ծրագիրը հաստատված է Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի Երևանի կրթա-գիտական ինստիտուտի տնօրենի կողմից:

ՏԱՏՀ ԵԿԳԻ տնօրեն՝ Ս.Ղուդրատյան

ԵՐԵՎԱՆԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ЕРЕВАНСЬКИЙ НАУКОВО-ПЕДАГОГІЧНИЙ ІНСТИТУТ
YEREVAN SCIENTIFIC EDUCATIONAL CENTRE
00064943
ՏԵՐՆՈՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ТЕРНОПОЛЬСКИЙ НАЦИОНАЛЬНЫЙ ЭКОНОМИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ
TERNOPOL NATIONAL ECONOMIC UNIVERSITY